ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2018 թվականի N 1

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19 ՀՈՒՆՎԱՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արենի համայնքի ավագանու 19 հունվարի 2018թվականի թիվ 1 նիստի հետևյալ օրակարգը՝

1. Նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
3. ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի տարածքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:
4. ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու 15-ը դեկտեմբերի 2017թվականի թիվ 53 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
5. ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի Արենի բնակավայրի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու մասին:
6. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Մայիս Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.166հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ _____

2. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ _____

3. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ_____

4. ԱԿԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱԿԱՆ_____

5. ԱԿԵՏԻՍՅԱՆ ՍԵԿԱԿ_____

6. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ_____

7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ_____

8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ_____

9. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ_____

10. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ_____

11. ՍԻՄՈՆՅԱՆ ՍԱՌԼԵՆ_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 2

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի կազմի մեջ մտնող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման 1-6 հավելվածների:

Կողմ -11 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ
2. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ
3. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
5. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ
6. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՆՆԱՆ
8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ
10. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ
11. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

հավելված 1

Արենի համայնքի ավագանու

19.01.2018թ.-ի թիվ 2 որոշման

Արենի համայնքի Արփի բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի 2018թ. հաստիքացուցակ

Հ/հ	Պաշտոնը	Սահմանված դրույքաչափ դրամ	Դրույքը	Փաստացի դրույքաչափ դրամ
1	Տնօրեն	105000	1	105000
2	Հաշվապահ	80000	0.5	40000
3	Դաստիարակ	90000	0.75	67500
4	Դաստիարակ	90000	0.75	67500
5	Դաստիարակ	90000	0.5	45000
6	Դաստիարակ	90000	0.5	45000
7	Երաժիշտ-դաստիարակ	90000	0.5	45000
8	Ֆիզկուլտ-դաստիարակ	80000	0.5	40000
9	Պարուսույց	80000	0.25	20000
10	Բուժքույր	80000	0.5	40000
11	Խոհարար	80000	1	80000
12	Դաստիարակի օգնական	80000	1	80000
13	Դաստիարակի օգնական	80000	1	80000
14	Լվացարար	80000	0.25	20000
15	Օժանդակ բանվոր	80000	0.5	40000
Ընդամենը				815000

Աշխատակազմի քարտուղար՝ Գևորգ Սիմոնյան

հավելված 2

Արենի համայնքի ավագանու

19.01.2018թ.-ի թիվ 2 որոշման

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի 2018թ. հաստիքացուցակ

Հ/հ	Պաշտոնը	Սահմանված դրույքաչափ դրամ	Դրույքը	Փաստացի դրույքաչափ դրամ
1	Վարիչ	115000	1	115000
2	Հաշվապահ	80000	0.5	40000
3	Բուժքույր	80000	1	80000
4	Դաստիարակ	90000	1	90000
5	Դաստիարակ	90000	1	90000
6	Դաստիարակ	90000	1	90000
7	Երաժիշտ-դաստիարակ	90000	0.75	67500
8	Դաստիարակի օգնական	80000	1	80000
9	Դաստիարակի օգնական	80000	1	80000
10	Դաստիարակի օգնական	80000	1	80000
11	Տնտեսվար, խոհարարի օգնական	80000	1	80000
12	Խոհարար	80000	1	80000
13	Լվացարար	80000	0.5	40000
14	Դռնապան	80000	0.5	40000
15	Հավաքարար	80000	0.5	40000
16	Ֆիզկուլտ հրահանգիչ	80000	0.5	40000
17	Պարուսույց	80000	0.5	40000
Ընդամենը				1172500

Աշխատակազմի քարտուղար՝ Գևորգ Սիմոնյան

հավելված 3

Արենի համայնքի ավագանու

19.01.2018թ.-ի թիվ 2 որոշման

Արենի համայնքի Ազարակաձոր բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի 2018թ. հաստիքացուցակ

Հ/հ	Պաշտոնը	Սահմանված դրույքաչափ դրամ	Դրույքը	Փաստացի դրույքաչափ դրամ
1	Տնօրեն	105000	1	105000
2	Դաստիարակ	90000	0.62	55800
3	Դաստիարակ	90000	0.5	45000
4	Դաստիարակ	90000	0.62	55800
5	Դաստիարակ	90000	0.5	45000
6	Դաստիարակի օգնական	80000	1	80000
7	Դաստիարակի օգնական	80000	1	80000
8	Երաժիշտ	90000	0.5	45000
9	Հաշվապահ	80000	0.5	40000
10	Բուժքույր	80000	0.5	40000
11	Խոհարար	80000	1	80000
12	Դռնապան	80000	1	80000
13	Լվացարար	80000	0.25	20000
14	Դերձակ-հավաքարար	80000	0.25	20000
15	Ֆիզ. դեկ	80000	0.25	20000
Ընդամենը				811600

Աշխատակազմի քարտուղար՝ Գևորգ Սիմոնյան

հավելված 4

Արենի համայնքի ավագանու

19.01.2018թ.-ի թիվ 2 որոշման

Արենի համայնքի Ռինդ բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի 2018թ. հաստիքացուցակ

Հ/հ	Պաշտոնը	Սահմանված դրույքաչափ դրամ	Դրույքը	Փաստացի դրույքաչափ դրամ
1	Մանկապարտեզի վարիչ	105000	1	105000
Ընդամենը				105000

Աշխատակազմի քարտուղար՝ Գևորգ Սիմոնյան

հավելված 5

Արենի համայնքի ավագանու

19.01.2018թ.-ի թիվ 2 որոշման

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի Արվեստի դպրոց ՀՈԱԿ-ի 2018թ. հաստիքացուցակ

Հ/հ	Պաշտոնը	Սահմանված դրույքաչափ դրամ	Դրույքը	Փաստացի դրույքաչափ դրամ
1	Տնօրեն	100000	1	100000
2	Հաշվապահ	80000	0.5	40000
3	Դաշնամուրի դասատու	80000	1	80000
4	Գեղանկարիչության դասատու	80000	1	80000
5	Դաշնամուրի դասատու	80000	1	80000
6	Երաժշտական գրականության, սոլֆեջոյի դասատու	80000	1	80000
7	Պարուսույց	80000	1	80000
8	Պարուսույց	80000	1	80000
9	Դհոլի դասատու	80000	1	80000
10	Մակրամե, զարդարվերտի դասատու	80000	1	80000
11	Կիթառի դասատու	80000	1	80000
12	Բանոնի դասատու	80000	1	80000
13	Ջութակի դասատու	80000	1	80000
14	Նվագակցող	80000	1	80000
15	Օպերատոր	80000	0.75	60000
16	Հավաքարար	80000	0.75	60000
17	Դռնապան	80000	0.75	60000
Ընդամենը				1280000

Աշխատակազմի քարտուղար՝ Գևորգ Սիմոնյան

հավելված 6

Արենի համայնքի ավագանու 19.01.2018թ.-ի

թիվ 2 որոշման

Արենի համայնքի ,,Արենի,,ՀՈԱԿ-ի 2018թ.

հաստիքացուցակ

հ/հ	Պաշտոնը	Սահմանված դրույքաչափը(դրամ)	Աշխատող-դրույք	Փաստացի դրույքաչափը (դրամ)
1.	Տնօրեն	150000	1/1	150000
2.	Հաշվապահ	120000	1/1	120000
3.	Օպերատոր	90000	1/1	90000
4.	Մեխանիկ	78000	1/1	78000
5.	Հավաքարար	78000	1/0,5	39000
6.	Փողոցային լույսերի պատասխանատու	90000	1/1	90000
7.	Ղուրակների,հուշարձանների պատասխանատու	78000	2/1	78000
8.	Ղուրակների,հուշարձանների պատասխանատու	78000	2/0,5	39000
9.	Սան-մաքրման աշխատող	78000	1/1	78000
10.	Խմելու ջրերի բաշխող	97000	1/1	97000
11.	Խմելու ջրերի բաշխող	80000	1/0.5	40000
12.	Խմելու ջրագծերի սպասարկող	78000	7/1	78000
13.	Խմելու ջրագծերի սպասարկող	78000	2/0,5	39000
14.	Խմելու ջրագծերի սպասարկող	78000	1/0,615	48000
15.	Ոռոգման ջրատարերի ջրվարներ	74000	5/0,5 (5 ամիս)	37000
16.	Ոռոգման ջրատարերի ջրվարներ	78000	1/1	78000
17.	Ոռոգման ջրատարերի ջրվարներ	78000	1/0,75	58500
18.	Աղբահանության տրակտորիստներ	80000	2 /1	80000
19.	Աղբահանության տրակտորիստներ	80000	2/0,325	26000
20.	Աղբահանության տրակտորիստներ	80000	2/0.5	40000
21.	Աղբահանության մեքենավար	95000	1/12	95000
22.	ՀՈԱԿ-ի բանվոր	78000	3/1	78000

Աշխատակազմի քարտուղար՝ Գևորգ Սիմոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 3

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջով, և հիմք ընդունելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը, Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Սահմանել Արենի համայնքի տարածքում 2018թվականի համար հետևյալ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման

աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4) Արենի համայնքի վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա) սահմանամերձ բնակավայրերում՝ հիսուն հազար << դրամ.

բ) ոչ սահմանամերձ բնակավայրերում՝ երկու հարյուր հազար << դրամ

5) Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա) սահմանամերձ բնակավայրերում՝ տասը հազար << դրամ.

բ) ոչ սահմանամերձ բնակավայրերում՝ երեսուն հազար << դրամ

6) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար դրամ

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար դրամ,

7) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ հարյուր հինգ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

8) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ տասս հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ,

գ. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

դ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,

ե. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ

9) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասս հազար դրամ ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար տասնհինգ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հիսուն հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,

10) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

11) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

12) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

13) Համայնքի տարածքում աղբահանությունը պատշաճ կերպով կազմակերպելու համար սպասարկման վճար է սահմանվում՝

ա) համայնքի տարածքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսեկան 60 << դրամ:

բ) Խաչիկ բնակավայրում (որպես սահմանապահ բնակավայր) աղբահանության վճար է սահմանվում՝ համայնքի տարածքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսեկան 30 << դրամ:

գ) առևտրի (այդ թվում շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար 70 դրամ:

դ) հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 30 դրամ:

ե) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 10 դրամ,

զ) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3 դրամ:

14) համայնքի տարածքում խմելու ջրի սպասարկման որակը բարձրացնելու համար խմելու ջրի սպասարկման վճար է սահմանվում՝

ա/համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի համար (որտեղ տեղադրված չեն ջրաչափեր) համայնքի տարածքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսեկան 60 << դրամ:

բ/ հասարակական և արտադրական տարածքների 1քմ-ի համար (որտեղ տեղադրված չեն ջրաչափեր)ամսական 100 << դրամ:

գ/ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի համար (որտեղ տեղադրված են ջրաչափեր) 1խմ-ի համար 30 << դրամ:

դ/ Խաչիկ բնակավայրում (որպես սահմանապահ բնակավայր) խմելու ջրի վճար է սահմանվում՝ համայնքի տարածքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 30 << դրամ:

ե/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ազարակաձոր բնակավայրում խմելու ջուրը օգտագործում են նաև տնամերձ հողամասերը ոռոգելու համար, խմելու ջրի սպասարկման վճար սահմանել 500դրամ՝ մեկ տնային տնտեսության հաշվով:

15) համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում, որտեղ առկա են ինքնահոս ջրատարեր, որոնք սպասարկում է համայնքապետարանը, ոռոգման ջրի սպասարկման վճար սահմանել՝ 1հա-ի համար տարեկան 20հազար << դրամ:

16) համայնքի կողմից կազմակերպվող մրցությունների և աճուրդների մասնակցության հայտերի գրանցման համար սահմանել հինգ հազար << դրամ տեղական վճար:

17) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող շարժական և անշարժ գույքը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց մրցույթում կամ աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը համայնքապետարանի բյուջե է վճարում փոխհատուցման վճար՝ գույքի չափագրման, գնահատման, կադաստրային ծախսերի և հայտարարության տպագրման համար՝ համայնքապետարանի կողմից ներկայացված անդորագրերի հիման վրա:

18) համայնքի վարչական տարածքում արոտավարձ է սահմանվում յուրաքանչյուր բնակավայրի արոտավայրերի տարեկան զուտ եկամտի 15%-ի չափով՝ հաշված մեկ պայմանական միավոր անասնագլխաքանակի համար՝ 1հա չափաբաժնով: Այն անասունների համար, որոնք արոտների սեզոնի ընթացքում տեղափոխվում են արտագնա արոտների, արոտավարձը կհաշվարկվի 50%-ի չափով՝ անասնատիրոջ դիմում առկայության դեպքում: Ըստ բնակավայրերի արոտավարձի միջին չափ է սահմանվում.

Ա) Ազարակաձոր բնակավայրի համար՝ (7400+2500+8000)/3=5966,7 * 15 % ≈ 900 << դրամ

Բ) Աղավնաձոր բնակավայրի համար՝ (2500+8000)/2=5250 * 15% ≈ 800 << դրամ

Գ) Արենի բնակավայրի համար՝ (2500+8000)/2=5250 * 15% ≈ 800 << դրամ

Դ) Արփի բնակավայրի համար՝ 2500 * 15% ≈ 400 << դրամ

Ե) Գնիշիկ բնակավայրի համար՝ (18600+13300+7400)/3=13100 * 15% ≈ 2000 << դրամ

Զ) Ելփին բնակավայրի համար՝ (18600+13300+8000)/3=13300 * 15% ≈ 2000 << դրամ

Է) Չիվա բնակավայրի համար՝ (2500+7400)/2=4950 * 15% ≈ 800 << դրամ

Ը) Ոինդ բնակավայրի համար՝ 8000 * 15% = 1200 << դրամ

19) Համայնքի տարածքում, միջպետական ճանապարհի եզրերին, բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության տեղական վճար սահմանել՝ հինգ հարյուր դրամ՝ մեկ ամսվա համար:

20) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել հինգ հազար դրամ:

21) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել հինգ հազար դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱԿԵՐՈՎՅԱՆ ՄՀԵՐ
2. ԱԼԱԿԵՐՈՎՅԱՆ ՋԱՆԻԿ
3. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ
4. ԱԿԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱԿԱՆ
5. ԱԿԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ
6. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ
8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ
10. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ
11. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 4

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15-Ը ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 53 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ Վայոց ձորի մարզի, Արենի համայնքի ավագանու 15-ը դեկտեմբերի 2017 թվականի <<Արենի համայնքի ավագանու 23.11.2016 թ.ի թիվ 49 որոշումն ուժը կորցրած ճանաչելու և ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>>թիվ 53 որոշման հավելվածում կատարել փոփոխություններ

1. Աշխատակիցների քանակը՝ 71 (յոթանասունմեկ)

2. 11-րդ կետից հետո ավելացնել նոր՝ 12-րդ կետով՝ Արենիի համայնքի ղեկավարի խորհրդական 1 (մեկ) հաստիք՝ պաշտոնային դրույքաչափը՝ 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ,

3. Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի 28-րդ կետի <<Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ>> լրացնել <<Աշխատակազմի առաջատար մասնագետ>>, պաշտոնային դրույքաչափը՝ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,

4. Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում ավելացնել նոր հաստիք՝ <<Աշխատակազմի առաջատար մասնագետ>>, պաշտոնային դրույքաչափը՝ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,

5. Առաջարկել Արենիի համայնքի ղեկավարի Արենիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին,

6. Սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերն ուժի մեջ են մտնում ՀՀ Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների

անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ
2. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ
3. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
5. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ
6. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ
8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ
10. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ
11. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2018 թվականի N 5

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականիՄայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին>> 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումը՝ Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Առաջարկել Արենիի համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության Կառավարության թիվ 1595-Ն <<ՀՀ Վայոց ձոր մարզի Արենիի գյուղական համայնքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին>> որոշմամբ հաստատված Արենիի համայնքի գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն և սույն որոշման N 1 հավելվածում նշված հողերի նպատակային նշանակության փոփոխության մասին կազմված հողաշինական գործը ներկայացնել ՀՀ վարչապետի 2001թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> հաստատմանը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ _____
2. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ _____
3. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ _____
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ _____
5. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ _____
6. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ _____

7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ _____

8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ _____

9. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ _____

10. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ _____

11. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 6

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՄԱՅԻՍ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 0,166 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածով, և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 27.12.2007 թվականի ՀՀ Վայոց ձոր մարզի Արենիի գյուղական համայնքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին թիվ 1595-Ն որոշման 3-րդ հավելվածը Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի Արենի բնակավայրի 45-րդ փողոց թիվ 3 հասցեում գտնվող 1.00811հա (նպատակային նշանակությունը՝ ջրային գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ ջրային արոտավայր, ծածկագիրը՝ 10-008-0179-0009) հողամասից 0.166հա հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիայի հողեր՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո հողամասում առկա մթերքի պահպանման համար կառուցված սառնարանի նպատակային նշանակությունը համարել փոխված՝ որպես համտեսի սրահ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հողի սեփականատեր Մայիս Մկրտչյանի կողմից հողամասի նպատակային նշանակության փոփոխության հետևանքով առաջացած հողի կադաստրային արժեքների տարբերությունը, որը կազմում է 520825 (հինգ հարյուր քսան հազար ութ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ, վճարելուց և վճարման անդորրագիրը ներկայացնելուց հետո:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ
2. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ
3. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
5. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

6. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

9. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

10. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

11. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ